ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ք.Եղեգնաձոր 18 հուլիսի 2015թ.

Վայոց ձորի մարզի վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման հանձնաժողովի նիստի

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝
փոխմարզպետ , հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը
հանձնաժողովի անդամներ՝
մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ Հ.Սարգսյանը /քարտուղար/,մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Ս.Շահբազյանը, ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան Ե.Շիրինյանը, <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Ա.Գալստյանը, <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Կ.Ասատրյանը, <<Ջերմուկի ԱԿ>> ՓԲԸ-ի տնօրեն Մ.Նալբանդյանը,
Նիստին հրավիրված են՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Սմբատ Գալստյանը,առողջապահության պետական տեսչության Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ Մուշեղ Մարգարյանը, ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ հիգիենիստ Հովիկ Սարգսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման մասնագիտական հանձնաժողովի գործունեության աշխատակարգի մասին:
2. Արտաընդերային ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների ներկա վիճակի և առաջիկա խնդիրների մասին:
3. Ընթացիկ հարցեր և առաջարկություններ:
4. Հանձնաժողովի նիստի ամփոփում:

Լսեցին՝

1 . Հանձնաժողովի անդրանիկ նիստը ղեկավարեց ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը՝ ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցերը:

2 . Ս.Շահբազյանը ներկայացրեց վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման մասնագիտական հանձնաժողովի ստեղծման նպատակը և գործունեության աշխատակարգը:

Արտահայտվեցին՝

- ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան Ե. Շիրինյանը նշեց, որ մարզի առողջապահական և բժշկական կենտրոններում բավականին լուրջ և արդյունավետ աշխատանքներ են տարվել վարակների կանխարգելման ուղղությամբ: Ստեղծվել է խորհուրդ, որի նպատակը ներհիվանդանոցային վարակների կանխարգելումն ու վերահսկումն է, ձեռք են բերվել մանրէազերծող սարքեր, մաքրող և լվացող համապատասխան նյութեր: Անցկացվել են նաև բուժ.անձնակազմի համապատասխան մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որոնք ամփոփվել են հատուկ ստուգարքների միջոցով: Ե. Շիրինյանի տեղեկությամբ, բուժ.անձնակազմերն այժմ ունեն անհրաժեշտ գիտելիքներ վարակների կանխարգելման և գործընթացը հսկողության տակ պահելու համար:

Ամփոփելով հանձնաժողովի նիստի աշխատանքները Հ. Սարգսյանը նշեց, որ հարկավոր է ամենայն լրջությամբ մոտենալ այս հարցին, վեր հանել առկա բոլոր խնդիրները, որպեսզի դրանց արագ կարգով հանգուցալուծում տրվի: Խոսելով դրական տեղաշարժերի մասին, մարզպետը ողջունեց տարված աշխատանքները, միաժամանակ նշելով, որ ստեղծված հանձնաժողովի աշխատանքները պետք է նպատակային լինեն, որպեսզի դրական տեղաշարժերը շարունակական և մշտական բնույթ կրեն:

Հանձնաժողովը առողջապահական կազմակերպությունների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց հետևյալ խնդիրների վրա.

- Պատշաճ կազմակերպել միջին բուժաշխատողների և բժշկական անձնակազմի ուսուցման դասընթացները,
- Կարճ ժամանակում ձեռք բերել ախտահանման նյութեր և ուլտրամանուշակագույն լամպեր(բակտերազերծ լամպեր),
- Բարձրացնել հիվանդանոցների բուժծառայությունների բաժանմունքների (վիրաբուժական, ինֆեկցիոն, մանկաբարձա-գինեկոլոգիական, ընդունարանի, շտապօգնության) պատասխանատուների աշխատանքի արդյունավետությունը ներհիվանդանոցային վարակների կանխարգելման միջոցառումների ուղղությամբ:
- Հանձնաժողովի հերթական նիստի քննարկմանը դնել ԱԱՊԿ-ների և <<Ջերմուկի ԱԿ>> ՓԲԸ-ի կատարած աշխատանքների մասին հարցը:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան

Քարտուղար՝ Հ. Սարգսյան